Հավելված N 1
ՀՀ կառավարության 2010 թվականի
մարտի 25-ի N 325 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ

Աշխատա-վարձի մակարդակները	Կրտսեր պաշտոններ			Առաջատար պաշտոններ			Գլխավոր պաշտոններ			Բարձրագույն պաշտոններ	
	3-րդ ենթա-խումբ	2-րդ ենթա-խումբ	1-ին ենթա-խումբ	3-րդ ենթա-խումբ	2-րդ ենթա-խումբ	1-ին ենթա-խումբ	3-րդ ենթա-խումբ	2-րդ ենթա-խումբ	1-ին ենթա-խումբ	2-րդ ենթա-խումբ	1-ին ենթա-խումբ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
11	88,000	88,000	88,000	88,000	110,000	143,200	149,600	156,000	171,800	225,900	342,100
10	87,200	87,200	87,200	87,200	109,000	141,800	148,200	154,500	170,100	223,700	338,800
9	86,400	86,400	86,400	86,400	108,000	140,400	146,800	153,000	168,500	221,500	335,500
8	85,600	85,600	85,600	85,600	107,000	139,100	145,400	151,500	166,900	219,400	332,200
7	84,800	84,800	84,800	84,800	106,000	137,800	144,000	150,000	165,300	217,300	329,000
6	84,000	84,000	84,000	84,000	105,000	136,500	142,600	148,600	163,700	215,200	325,800
5	83,200	83,200	83,200	83,200	104,000	135,200	141,200	147,200	162,100	213,100	322,600

10_0325

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
4	82,400	82,400	82,400	82,400	103,000	133,900	139,900	145,800	160,500	211,000	319,500
3	81,600	81,600	81,600	81,600	102,000	132,600	138,600	144,400	159,000	209,000	316,400
2	80,800	80,800	80,800	80,800	101,000	131,300	137,300	143,000	157,500	207,000	313,300
1	80,000	80,000	80,000	80,000	100,000	130,000	136,000	141,600	156,000	205,000	310,200

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
մարտի 25-ի N 325 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով պաշտպանության համակարգի քաղաքացիական ծառայողներին տրվող ամսական հավելումների հաշվարկման պայմանները։

2. Զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված կամ զինվորական պաշտոնի կրճատման հետևանքով քաղաքացիական հատուկ ծառայության հավասարազոր կամ ցածր պաշտոնում նշանակված քաղաքացիական ծառայողի հավելումը սահմանվում է այն չափով, որ վճարման ենթակա աշխատավարձի ընդհանուր գումարը չգերազանցի զբաղեցրած զինվորական ծառայության վերջին պաշտոնում ունեցած դրամական բավարարման և դրան հավասարեցված վճարումների (ներառյալ պարենի փոխհատուցման) ընդհանուր գումարը։

3. Զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված կամ զինվորական պաշտոնի կրճատման հետևանքով քաղաքացիական հատուկ ծառայության հավասարազոր կամ ցածր պաշտոնում նշանակված քաղաքացիական ծառայողի համար սույն կարգի 2-րդ կետով սահմանված աշխատավարձի ընդհանուր չափը պահպանելու համար հավելման չափը սահմանվում է պաշտոնային դրույքաչափի կրկնակին չգերազանցող գումարի չափով՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանի համաձայն։

4. Մրցույթի արդյունքով, ինչպես նաև արտամրցութային կարգով քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնում նշանակված քաղաքացիական ծառայողի հավելումը սահմանվում է զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված կամ զինվորական պաշտոնի կրճատման հետևանքով քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնում նշանակված քաղաքացիական ծառայողի պաշտոնի ենթախմբի սանդղակում համապատասխան մակարդակի համար հաշվարկված նվազագույն հավելման չափով:

5. Մրցույթի արդյունքում, ինչպես նաև արտամրցութային կարգով քաղաքացիական ծառայության ավելի բարձր պաշտոնի նշանակված քաղաքացիական ծառայողի նոր ենթախմբի աշխատավարձի սանդղակում իր նախորդ պաշտոնային դրույքաչափին հավասար դրույքաչափի առկայության դեպքում հավելումը հաշվարկվում է նախորդի նկատմամբ 2 տոկոս ավելացումով, հակառակ դեպքում՝ նոր ենթախմբի համար սահմանված նվազագույն հավելման չափով:

6. Առաջին անգամ քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնում նշանակված քաղաքացիական ծառայողի հավելումը հաշվարկվում է զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված կամ զինվորական ծառայության պաշտոնի կրճատման հետևանքով քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնում նշանակված քաղաքացիական ծառայողի պաշտոնի ենթախմբի առաջին մակարդակի համար աշխատավարձի ընդհանուր չափի հաշվարկման արդյունքում սահմանված նվազագույն հավելման չափով:

7. Քաղաքացիական ծառայողի աշխատավարձի բնականոն աճի դեպքում սույն կարգով սահմանված հավելումը հաշվարկվում է նախորդ մակարդակի նկատմամբ 1 տոկոս աճով:

8. Մրցույթի արդյունքում քաղաքացիական ծառայության ավելի ցածր պաշտոնի նշանակված քաղաքացիական ծառայողի հավելումը սահմանվում է իր նախորդ պաշտոնի համար սահմանվածի չափով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ